



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ ՏՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐ ԳԼԽԱՒՈՐ ՀԻՊԱՏՈՍԻՆ

Ուրբաթ, 13 Փետրուարի կեսօրին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան այցելեց Հայաստանի Հանրապետութեան Լոս Անճելըսի հիւպատոսարանը եւ հանդիպում ունեցաւ նոր նշանակեալ գլխաւոր հիւպատոս Գրիգոր Յովհաննիսեանի ու այլ պատասխանատու պաշտօնատարներու հետ: Առաջնորդ Սրբազանին այս այցելութիւնը փոխադարձութիւն մըն էր այն այցելութեան, զոր նոր նշանակեալ հայրենի դիւանագետը տուած էր Ազգ. Առաջնորդարան՝ 6 Փետրուարին: Առաջնորդ Սրբազանին կ'ընկերանային Արժ. Տ. Ռազմիկ Զինյ. Խաչատուրեան եւ Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքիճեան:

Հանդիպումը առիթ ծառայեց խորհրդակցելու հայրենի իրադարձութեան ու մասնաւորապէս մեր գաղութի կեանքին մասին, հիւպատոսութեան աշխատանքներուն ծիրին մէջ:

Առաջնորդ Սրբազանը այս առիթով անգամ մը եւս յաջողութիւն մաղթեց հայրենի դիւանագետին ու բարի երթ մաղթեց դիւանագիտական իր անդրանիկ առաքելութեան մէջ: Ան նաեւ յայտնեց, որ Ազգ. Առաջնորդարանը կը ծրագրէ ի մօտոյ ընդունելութիւն մը կազմակերպել ի պատիւ հայրենի գլխաւոր հիւպատոսին, մասնակցութեամբ մեր թեմի ներկայացուցիչներու եւ ծխական շրջաններու ժողովականութեան անդամներու:

PRELATE VISITS THE ARMENIAN CONSULATE TO MEET WITH THE NEW CONSUL GENERAL

On Friday, February 13th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, visited the Consulate General of Armenian where he met with the newly appointed Consul General the Honorable Grigor Hovhannisyan and consular staff. The Prelate and new Consul General previously met when His Excellency visited the Prelacy a week prior on February 6th. The Prelate was accompanied by Rev. Fr. Razmig Khatchadourian and Catholicosate Central Executive member Mr. Khajag Dikijian.

The visit offered the opportunity for the Prelate and Consul General to discuss issues concerning Armenia as well as the endeavors the Consul General has planned for the future.

The Prelate once again wished success to Mr. Hovhannisyan in his new position and informed him that the Prelacy is planning a reception in his honor in the near future with the participation of Prelacy representatives.